ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25.07.2019թ.
ժ. 11 ⁰⁰

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ վարչության պետ Հ. Մելիքյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
- ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,
- ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության գլխավոր մասնագետ Գ. Դավթյանը նիստից բացակայում է,

Գնումները համակարգող՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ա. Բաղրամյան)

1. **«Էյչ Բի Էն» ՍՊԸ**-ի կողմից գրությամբ ներկայացված պայմանագրի նախագիծը քննարկելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի կողմից գրությամբ ներկայացված պայմանագրի նախագիծը քննարկելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քննարկելով **«Էյչ Բի Էն» ՍՊԸ**-ի կողմից գրությամբ ներկայացված պայմանագրի նախագիծը որոշեց չհամաձայնվել մասնակցի կողմից առաջարկած պայմանագրի տեխնիկական բնութագրում կատարվելիք փոփոխությունների հետ, քանի որ տեխնիկական բնութագրի պայմանները սահմանված են եղել հրավերով և «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի կողմից օրենքի 29-րդ հոդվածի համաձայն հրավերի պարզաբանում չի պահանջվել և օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները չեն բողոքարկվել, ավելին «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ով (Դիմում գնանշման հարցմանը մասնակցելու) հավաստել են, որ հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում են հայտ, իսկ Հավելված 2-ով (Հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին) հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և քանի որ պայմանագրի կնքման ծանուցումից հետո օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ն չի ներկայացել պայմանագիր ստորագրելու համար գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի հայտը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 49-րդ կետի պահանջները «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով ընթացակարգում մերժված չափաբաժնում 1-ին տեղ գբաղեցնող ճանաչեց «Արկածախնդիր» ՍՊԸ-ն, սակայն ուսումնասիրելով «Արկածախնդիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը պարզվեց, որ Հավելված 1-ում մասնակիցը իր հարկ վճարողի հաշվառման համարի փոխարեն ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության հարկ վճարողի հաշվառման համարը: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

26.07.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:
Սահմանված ժամկետում «Արկածախնդիր» ՍՊԸ-ի կողմից ուղարկվեծ Հավելված 1-ի շտկված տարբերակը, որը ընդունվեեց գնահատող հանձնաժողովի կողմից:

1.2 Հանձնաժողովը որոշեց. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7»** ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Գ. ՈՒստյան

Գնահատող Կ. Պողոսյան

Գնումների համակարգող՝ Ա. Բաղրամյան